41. ԲԱԼԱՔ ՀՈՐԹԿՈՒ ՀԵՔԻԱԹ

Կէղնին, չէղնին քոմմե ախչիկ կէղնին։ Կէրթան կնստին մարգի դուռ նըխշ կէնին։ Էն մեկ ախչիկ կտտռե։ Իդոտկուն ախչըկներ կերթվին, էն կրսե. «Ես չեմ, իմ ախպոր արև ես չտտռեր իմ». ախչիկներ բոլոր, ամեկ իրան ախպոր արևը կերթվին։ Կմնա մեկ ախչիկ առանց երթում, կըսե.

— Ընձի ախպեր չկա, իմ բալաք հորթկու արև գինա ես չիմ։

Էդ ախչիկներ լէ դելնան զէն մեկ ախչիկ կծեծին, կըսին. «Սև կապուկ, քըզի յոթն ախպեր է, հանդե յոթ սարի ետևն է»։ Ախչիկն է հ՚ոցքի գելնա ու գիգա տուն։

Կըսե.— Մարե՛, ընձի ախպեր կա, դու հ՚որի՞ն ընձի չըսիս. ընձի պաշար կողե, կէրթամ իմ ախպրտանց խեչ։

Ախչիկ հ՚ոցքի գելնա կէրթա. մամ լէ հաց կկողե, կդնե հետ։

Շատ կէրթա, քիչ կէրթա, անվերի սարի մե ռաստ գիգա։ Կտեսնա օր հանդե բարակ մուխ մե, էդ սարի տկեն կթալե։ Կէրթա կտեսնա օր հանդե ավահի մե շիքուկ է։ Դուռ կբանա, ներս կմտնա։ Բարև կիտա, բարև կառնե։

Ախպրտանք չըն ճանչնա, կըսին. «Ախչի, հավքն ուր թևով, օձն ուր պորտով էդա տեղ չի գար, դու իմա՞լ էկար»։

Էն լէ կըսե.— Ծեր սիրու համար էկա։

Քուր կճանչնա զախպըրտինք, ախպրտանք զքուր դրռ հլա չճանչնան։ Կնստին կժղլին, կհարցուն, կփորցուն, դորեսի զքուր կճանչնան։

Իդոտքուն ախպրտանք դելնան զուրանց քուր կպաքին, կուրախնան, կխնդան, կուտին, կխմին ու կպառկին կքնին։

Աղոթրնին ախպրտանք գելնին կէրթան աշխատելու։ Քուրոջ կրսին թե՝ «Հանդե մենք կէրթանք»։ Ուրանց կատում լէ կէղնի։ Կվերցուն քուրոջ կրսին. «Մենք կէրթանք, իդա հատ չամիչ առնիս, օռեն հատ մե իտաս իդա կատվուն, չէղնի՞ ուտիս, հմա կատուն ինատ կէնե կշռե, անթեղ կընցու, օր հ՚ընցուց, էլ կրակ չկա էդտեխ, դորիս կմնանք անկրակ»։

Ախչիկն է, օրեն մի հատ կիտա էդ կատվուն, իդոտկուն օրերուց մե օր կատվին չի տար չամիչ, ինք կուտե։

Կատուն լէ գելնա կշռե, անթեղ գընցու։ Ախչիկն է, կշիվարի ու կկանի, կրսե. «Հ՚իրկուն օր իմ ախպրտանք էկան, ի՞նչ սալրխ տամ ուրանց»։

Ախչիկն է կառնե ղքարման ու գելնա կկանի տանիք, կտեսնա օր հանդե հեռո՞ւ տեխե մե մուխ կթալե։ Ախչիկն է, կառնե էդ մխի հ՚առեճ ու կէրթա։

Շատ կէրթա, քիչ կէրթա ու կմտնա էդ տուն։ Կտեսնա օր հանդե թոնդիր վառ, յոթն կանթեն ռեռոշ դնուկ է վըր թոնդրան ու հատիկ կխաշին, յոթ հատ կնիկ լէ նստուկ ին ռեռոշի բոլոր։ Յոթ գլխեն դևն էլ տուն չէ։

Կնկտիք կվերցուն ախչկան կրսին. «Խավքն ուր թևով, օձն ուր պորտով իտա տեխ չի դա, դու իմա՞լ էկար։ Մկա դևն օր էկավ, քըզի հըմալ կկտրտա իրարուց, օր քու ճոչ կտոր անգանջ մնա»։

Ախչիկ լէ կվերցու կրսե.— Ընձի կատու մե կեր, պտի օրեն չամիչ մե իտենք էդա կատվին, օր թը կատուն անթեղ չընցուցեր։ Օրերից մե օր, էդ չամիչ մոռցա թալի իմ բերան։ Կատուն ինատ էրեց, շռեց զանթեղ հ՚ընցուց։ Ես լէ էլա կանա տանիք, առա էդա մխի հ՚առեճ ու էկա կրակի։

Էդ կնկտիք լէ կտանին, թոնդրեն կրակ կհանին ու դիտան շերփով հատիկ ախչկան, ու ախչիկ կվախենա ու վռազով գելնա դուրս։ Ախչկա թելի կծիկ կպատի դևի դուռ։

Ախչիկ զկրակ առնի իդա ուր տուն, կվառե զթոնդիր։

Դևն է գիգա սարեն ուր տուն ուր կնկտոց կրսե.

— Մարթ, մարթահոտ գիգա։

Կնկտիք լէ կրսին.— Մարթ մարթահոտ քըզնե գիգա, դու սարեն ձորեն գիգաս։

Դևն է գելնա դուրս, կտեսնա օր կծիք մե հանդե ուր պատի տակ, կառնի զկծիք ի ծեռ ու կկծքի, դիգա ախչկա դուռ։

Ախչիկ լէ վըր տանքին կէղնի, կտեսնա օր հանդե յոթ գլխանի դևն էնդհուց էկավ։ Ախչիկն օր կտեսնա զդև, խուտում կկոտրի, կփախի մտնի սնդուկ ու դուռ կփակե վըր ուրին։

Դևն դիգա, ինչ իլաջ կէնե, ախչիկ զդուռ չրանա։

Կըսե.— Մադամ օր դու դուռ չբանաս, քու ճկութ հան դուս։

Ախչիկն է ճկութ կթալե դուրս, դևն է ախչկա ճկութ կառնե ուր պերան ու կծծկե։ Ինչքան օր ախչկա ջանդակ արին օր կա հ'մեն կծծկե, ախչկա ուժ դընցնա ու կպատի էդ սընդկի մեջ։

Ու դև գելնի հ'ոցքի գիգա ուր տուն։

Հ'իրիկուն ախչկան ախպրտանք գիգան տուն, գընգնան զքուր կաշին, կըսին. «Հե՜յ, տեր աստված, էդ իմա՞լ էղավ էսա ախչիկ հ'ոցքի»։ Պզտիկ ախպեր խելոք կէղնի, կըսե.

— Զսնդկի դուռ բանանք, տեսնանք հալա սնդկի մեջ չի՞։

Գելնան սնդուկ կրանան, կտեսնան օր քուր մեռուկ, պատուկ սնդկի մեջ։ Կհանին զքուր սընդուկեն, քուրոջ պորտ կօլորին, ճուր կցանին քուրոջ էրեսի վրեն, քուր կսախնա էլման։

Քուրն է կնստի ուր գլխաց գալած խըսա կէնե, կըսե.

— Ջամիլ մոռցա, կատվին չտվեցի, կատուն ինատ էնեց ջռեց, զանթեղ հ'ընցուց, ես լէ հ'ելա կանա տանիք, տեսա օր ձորի մեջեն մուխ մե կթալեր, ես լէ առա էդ մուխ ու գացի։ Գացի տեսա օր էդ տուն յոթ գլխեն դևի տունն էր, առա զկրակ ու վախեցա հ'ելա տնեն։ Իմ կծիք պատավ դևի դուռ։ Դև լէ իմ կծիք կծկեց ու էկավ, ես լէ տանիքն ի, տեսա օր հանդե, յոթ գլխեն դևն էկավ, մռութ մե էրկինքն էր, մեկ գետինքն էր. ես վախեցա, փախա մտա սնդուկ։ Էկավ էնեց ու չէնեց ես սնդուկի դուռ չբացի, ըսեց. «Օր թը սնդկի դուռ չբանաս, քու ճկութ հան դուրս», ես օր իմ ճկութ հանի դուս, դև առավ իմ ճկութ ուր բերան՝ու ծծկեց, իմ ուշք հ'ընցավ, ես պատա սնդկի մեջ։

Էդ խսեն օր կէնե, ախպրտանք հ'ոցքի կբառնան ուրանց տուն ու կփախնին, կըսին «Փախեք օր չէղնի յոթ գլխեն դև հասնի մըզի»։

Էդ ախպրտանք լէ շատ գիգան քիչ գիգան, գիգան ուրանց տուն։ Գիգան յոթն ախպեր լէ կկարգվին։ Ընդրանք կհասնին ուրանց մուրազին, մենք լէ հասնինք մեր մուրազին։

Հ'երկնուց իրեք խնձոր պատավ՝ մեկ ըսողին, մեկ գրողին, մեկ լէ Կնյազին։